իշխանութեամբ նստցիս անդ, և մեք ապասեմք պարապոյ՝ զի հնարեսցուք դարձուցանել և զՊատրիարքութիւնն Երուսաղէմի 'ի վերայ քո։ Հաւանեալ ընդ այս Ապրօի՝ եմուտ առ Եպարքոսն, և էառ նախ հրովարտակ հաստատութեան վասն Կաթողիկոսութեան Եղիազարու, խոստացեալ տալ յԱրքունիս ամ յամէ 15,000 փողս։ Ցաւեալ ապա Ապրօ խնդրել եւ զխնամակալութիւն Երուսաղէմի իբր թեթեւ ինչ, և ասէ՝ որովհետեւ յանձն արարիք 'ի ձեռս Նորա հովուել զՀայս՝ որք են ընդ ձեռամբ Օսմանցւոց, կարեւոր է՝ զի ընդ ձեռն Նորա հոգասցին և հասք Աթոռոյն Երուսաղէմի, և մի վատնեսցին ձեռամբ անզգոյշ անձանց։ և Եպարքոսն կատարեաց զխնդիր Նորա։ Ցայնժամ առեալ Եղիազարու զհրովարտակ Կաթուղիկոսութեան, և զնամակ խնամակալութեան Երուսաղէմի, եկ յԱդրիանուպոլսոյ եւ չոգաւ 'ի Թէքիրտաղ եւ անտի 'ի Պրուսա։ Սակայն Հայք այսու եւս ոչ չատացեալ՝ մատուցին գիր աղաչանաց առ Եպարքոսն 'ի բանակի անդ և ասեն՝ Եղիազար Կաթուղիկոսն եղեւ իշխան Կայսերական հրովարտակաւ, ըստ օրինաց մերոց բաժանել զՄիւռոնն եւ համութեամբ ազգին կացուցաւ նա խնամակալ ամենայն կալուածոց և ստացուածոց վանօրէից Երուսաղէմի, զորս կտակեալ եմք ըստ օրինաց մերոց։ զի մի՛ առաջին Պատրիարքունք և արք Նորա, և վարդապետք ոմանք, որք դնան անդ Արքունի հրամանաւ, լինիլ ձեռնամուխ եւ հակառակիլ տարապարտուց։ և զի մի կորիցեն և անկցին 'ի ձեռս այլոց, զի վասն այսր տուեալէ հրովարտակ 'ի Կայսերական ատենէ, եւ արձանագրեալ 'ի դատարանն Երուսաղէմի։ Ապա խնդրեցին հրովարտակ ըստ առաջնոյն, լինել Եղիազարու խնամակալ վանօրէից և կալուածոց Երուսաղէմի, որպէս և էրն։ եւ հրովարտակն այն շնորհեսցի Արքունի դանձատանէ (մալիյէ), զի մի առաջին Պատրիարքունք նամակաւ իւրեանց պահանջեսցեն զիրս ինչ 'ի ստացուածոց կամ 'ի կալուածոց անտի։ Գրեցաւ հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի եւ առ դատաւորն Երուսաղէմի, զի 'ի հասանիլ անդր Եղիազարու առնել այնպէս։ 'ի ՅՕ Սէֆէր ամսոյ, ՌՕՎՆ (1666)։

Իսկ Եղիազար դարձ արարեալ 'ի Պրուսայէ, և եկն 'ի